



ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ



ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊՒ ԱՐՇԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ Թիվ 7(32), 30 սեպտեմբեր, 2020թ.

ՀՀ ՈՍՏԻՎԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՀՀ ՈՍՏԻՎԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐԻ ՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐԿԱ ԱՌԹԻՎ



Շնորհավոր տոնդ, բարեկամ, շնորհավոր տոնդ, հայ մարդ, քո երկիրն ու քո պետությունն անկախ է արդեն 29 տարի: Երբեմն արագ, իսկ երբեմն էլ դանդաղ քայլերով, տեղ-տեղ՝ մռայլ ու տխուր, առավել հաճախ՝ հպարտ ժպիտով, երբեմն՝ գիրք-գրիչով, երբեմն էլ՝ զենքով, առավել հաճախ՝ երկուսն էլ ձեռքիդ, ծնողիդ առաջ՝ խոնարհ, զավակիդ մոտ՝ վարար, արևագալը քո տանը, իսկ մայրամուտն օտար ավերում դիմավորելով, պատճառաբանությունները մերժած, ելքեր փնտրելով, բայց միշտ բարեպաշտ, արարող ու պատվախնդիր՝ ընթացել ես 29 տարիների այս ճանապարհով: Եվ հայացքդ քո օջախը ջերմացնող արևին հառած, ցավերի մեջ ժպտալով՝ ուժեղ ես եղել, անպարտ ես եղել, որովհետև առջևում, կողքիդ ու թիկունքիդ տեսել ու զգացել ես քեզ պատկանող, քո ստեղծած ու փայլափայտ, քո անկախ երկիրն ու նրա

տեսլականը: Ուժեղ ես եղել, որովհետև նրան ես տվել կյանքիդ ընթացքում քո ունեցած ամենաթանկը՝ քո զինվորին: Եվ ամեն անգամ կորցնելով՝ կրկին գտել, գոտեպնդվել ու հզորացել ես: Ուժեղ ես եղել, բարեկամ, հայ մարդ, քանզի գիտակցել ես, որ մարդիկ գնում են իրենցից ուժեղի հետևից և ոչ թե իրենց նմանների և առավել և՛ իրենց նմանակողների: Ուժեղ ես եղել, բարեկամ, հայ մարդ, քանզի գիտակցել ես, որ քո տնից մինչև հայրենիք զինվոր է, քո ընտանիքից մինչև ժողովուրդ զինվոր է, քո իղձերից ու երազանքներից մինչև դրանց իրականացումը կրկին զինվոր է, մեր զինվորն է: Շնորհավոր տոնդ, հայրենիք, շնորհավոր տոնդ, հայ մարդ, շնորհավոր տոնդ, հայրենիքի՝ զինվոր:

Մուշեղ Բաբայան, ոստիկանության զեներալ-մայոր

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1

Կրթությունն ամենագոր զենքն է, որը դու կարող ես օգտագործել աշխարհը փոխելու համար: Նելսոն Մանդելա

Գիտելիքի և դպրության պետական տոնը նշվում է սեպտեմբերի 1-ին, այն ուսումնական տարվա, ինչպես նաև աշնան առաջին օրն է: Գիտելիքը հզոր ուժ է, որը միշտ էլ օգնում է ավելի ճիշտ ապրել՝ հարստացնելով մարդու միտքն ու հոգին: Կրթված մարդը, այնուամենայնիվ, գտնում է իր ճիշտ տեղն ու դիրքը՝ արժանանալով շրջապատի ուշադրությանն ու համակրանքին: Հայտնի է այն միտքը, որ մարդն ստեղծված է այն գրքերից, որոնք կարդացել է: Հետևաբար, պետք է շարունակ լցնել ու հարստացնել գիտելիքների պաշարը՝ ձգտելով ինքնագարգացման և հոգու կատարելության: Դեպի գիտելիքի աշխարհ մուտքն ազդարարող այս օրը բոլորիս տոնն է: Տեղին է հիշել հայտնի փիլիսոփա Պլատոնի՝ գիտելիքի հայտնի սահմանումը՝ արդարացված ճշմարիտ հավատք:

Սեպտեմբերի 1-ին ուսումնական տարին սկսելու ավանդույթը հին ակունքներ ունի: 4-րդ դարում 325 թվականի մայիսի 20-ին, Բյուզանդիայի Նիկիա քաղաքում բյուզանդական կայսր Կոստանդինոս Ա Մեծի հրամանով գումարվեց Նիկիայի Ա տիեզերական ժողովը, որտեղ որոշում կայացվեց նոր տարին սկսել սեպտեմբերի մեկից: Ըստ ավանդության Արիստակեսը Հայաստան է բերում Նիկիական ժողովի որոշումները և ներկայացնում Գրիգոր Լուսավորչին: Վերջինս դրանք ներմուծում է հայ եկեղեցու դավանաբանության և ծիսակարգի մեջ: Եվ քանի որ այդ ժամանակաշրջանում բոլոր դպրոցները գործում էին եկեղեցիներին կից, նոր ուսումնական տարին ևս սկսեցին նշել սեպտեմբերի մեկին: Սեպտեմբերի 1-ը որպես գիտելիքի օր, սկսել է նշվել ԽՍՀՄ-ում: Մինչ XX դարի 30-ական թվականները ԽՍՀՄ-ում ուսումնական տարվա սկիզբը պաշտոնապես հաստատված չէր: Դասերը տարբեր ուսումնական հաստատություններում սկսվում էին տարբեր օրերի: Օրինակ՝ գյուղերում ուսումնական տարին սկսվում էր խոր աշնանը, երբ ավարտվում էին գյուղատնտեսական աշխատանքները, բայց ահա քաղաքներում գիմնազիաներն սկսում էին գործել դեռևս օգոստոսի կեսերից: 1930 թվականի օգոստոսի 14-ին ժողովրդական կոմիսարների խորհուրդը

որոշեց, որ 8-10 տարեկան բոլոր երեխաները պետք է դպրոց ընդունվեն աշնանը: 1935 թ. սեպտեմբերի 3-ին ժողովրդական կոմիսարների խորհրդի ու ԽՍՀՄ կենտրոնական կոմիտեի համատեղ որոշմամբ սեպտեմբերի 1-ը հայտարարվեց ուսումնական տարվա սկիզբ: Հենց այդ ժամանակ էլ որոշվեց ուսումնական տարվա և արձակուրդների մոտավոր տևողությունը: 1980 թ. հոկտեմբերի 1-ին, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշման համաձայն, սեպտեմբերի 1-ը պաշտոնապես հայտարարվեց Գիտելիքի օր:

Գիտելիքն ամենակարևորն է կյանքում. առանց գիտելիքի և առանց կրթության մարդը խավարի մեջ կապիր: Այն, ինչ մենք գիտենք, սահմանափակ է, իսկ այն, ինչ մենք չգիտենք, անվերջանալի և անսահման է, քանի որ մենք ամեն օր ենք սովորում և ամեն օր էլ ավելի համոզվում, որ շատ քիչ է այն: Գիտության ամար լույսի մեջ կարելի է բնակվել և մշտական հանգստություն գտնել: Մարդ որքան ավելի շատ է իմանում, այնքան ավելի ուժեղ է, այնքան ավելի քիչ է շեղվում, լուսեղեն ոգով ավելի է լցվում և իմաստնամուտ: Ինչպես ասել է մեծն Եղիշեն. «Լավ է կույր աչքը, քան կույր մտքը»:

Շնորհավորելով կրթության բնագավառի բոլոր ներկայացուցիչներին Գիտելիքի օրվա կապակցությամբ՝ մաղթում եմ բազմաթիվ նվաճումներ ու վերելքներ կյանքի բարդ ճանապարհին:

Սեպտեմբերի մեկը տոն է բոլորիս համար. առաջին դասարան գնացող և առաջին քայլեր կատարող երեխայի, մատաղ սերունդ դաստիարակող մանկավարժի, նոր կյանքի ուղի բռնած պատանի ուսանողի, գիտության անվերջանալի ճառագայթի հետևից գնացող մագիստրոսի, ասպիրանտի, գիտնականի և բոլոր, բոլորի համար:

Շնորհավոր, սիրելի՛ դասախոսական և տեսչական անձնակազմ, հարգարժան աշխատակիցներ, ուսանողներ, առաջին կուրսեցիներ, շրջանավարտներ:

Շնորհավոր սեպտեմբերի մեկ: Հիշե՛ք՝ գիտելիքով զինված մարդն անպարտելի է:

Լիանա Խրշոյան, ոստիկանության լեյտենանտ

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ՝ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ



Անկախությունը յուրաքանչյուր քաղաքացու համար զերագույն արժեք է, իսկ ոստիկանության ծառայողի համար՝ նաև նվիրումով և անմնացորդ ծառայելու շարժառիթ:



Ծառայողական պարտականությունները բարեխղճորեն և բարձր պատասխանատվությամբ կատարելու, օրինականության ամրապնդման, հասարակական կարգի ապահովման գործում բարձր ցուցանիշներ ապահովելու համար, ինչպես նաև ի նշանավորումն Անկախության տոնին

29-րդ տարեդարձի՝ ՀՀ ոստիկանության պետի հրամանով պարգևատրվել են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քուլեջի մարտական և ֆիզիկական պատրաստականության ամբիոնի ավագ դասախոս, ոստիկանության փոխգնդապետ Էդգար Ատոմի Պողոսյանը պատվոգրով, ծառայության բաժնի կուրսի պետ, ոստիկանության մայոր Էդգար Արթուրի Պողոսյանը ոստիկանության գործերում զերազանց ծառայության համար առաջին աստիճանի կրծքանշանով: Շնորհավորում ենք պարգևատրվածներին մաղթելով նորանոր մասնագիտական բարձունքներ:

ՇՆՈՐՀԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔԻ ՕՐ

Սիրելի՛ գործընկերներ, կրթության և գիտության բնագավառի ներկայացուցիչներ, ուսանողներ և հատկապես առաջին կուրսեցիներ, շնորհավորում եմ բոլորիս Գիտելիքի և դպրության օրվա, ինչպես նաև նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ, մաղթում եմ քաջառողջություն, մասնագիտական նոր նվաճումներ, տոկոսություն, համերաշխություն և անսպառ եռանդ մեր նվիրական գործում:

Սիրելի՛ առաջին կուրսեցիներ, այսօր դուք ուրք եք դնում իրավապահ համակարգի մի մեծ ընտանիք: Ձինվեք Գիտելիքներով, որպեսզի ձեր նպաստը բերեք մեր երկրի իրավակարգի ամրապնդման ու հանցավորության դեմ պայքարի գործում: Շնորհավորում եմ նաև ձեր ծնողներին և հարազատներին, ովքեր սրտի թրթռով անհամբեր սպասել են այս օրվան: Արդարացրե՛ք նրանց հույսերն ու սպասումները և դարձե՛ք օրինակ ձեր շրջապատի համար:

Բարի գալուստ ՀՀ ոստիկանության կրթահամալիր և անփորձանք ծառայություն բոլորիս:



Անի Հայրապետյան, ոստիկանության զննապետ

ԱՐԺԱՆԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ



ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնն այսուհետ նոր պետ ունի:

Քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի պետի ժամանակավոր պաշտոնակատար, իրավաբանական գիտությունների թեկնածու, ոստիկանության փոխգնդապետ Հռիփսիմեն Խաչատրյանը նշանակվել է նույն ամբիոնի պետ:

Հռիփսիմեն Խաչատրյանը իր բազմամյա ծառայության ընթացքում միշտ աչքի է ընկել իր աշխատասիրությամբ և ուսումնական գործընթացի կազմակերպման նոր ու հետաքրքիր մոտեցումներով: Հեղինակ է բազմաթիվ գիտական աշխատությունների և հոդվածների: Նորընծա ամբիոնի պետին մաղթում ենք բեղուն գիտամանկավարժական գործունեություն, մասնագիտական անսպառ ձեռքբերումներով լի ապագա:

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Մ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրը հայտարարում է «Իրավագիտություն» մասնագիտության մագիստրոսի կրթական ծրագրով հեռակա վճարովի ուսուցման 2020/2021 ուսումնական տարվա ընդունելություն

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի «Իրավագիտություն» մասնագիտությամբ մագիստրոսի կրթական ծրագրով հեռակա վճարովի ուսուցման՝ առանց պարտադիր գինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքի՝ 2020/2021 ուսումնական տարվա ընդունելության համար սահմանվել է 10 տեղ:

Ուսման տևողությունը 2,5 տարի է, կիսամյակային վարձավճարը՝ 250.000 դրամ: Ընդունելության մրցույթը հաջողությամբ անցած դիմորդների հետ մինչև նրանց որպես մագիստրատուրայի 1-ին կուրսի սովորողներ հրամանագրելը կնքվում է պայմանագիր, որի տեքստին դիմորդները ծանոթանում են մինչև փաստաթղթերը հանձնելը: Մագիստրատուրայի ուսումնական պլանով նախատեսված ողջ դասընթացը և ամփոփիչ ատեստավորումն անցած շրջանավարտներին շնորհվում է «Իրավագիտություն» մասնագիտությամբ իրավագիտության մագիստրոսի աստիճան և տրվում պետական նմուշի դիպլոմ:

Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի կադրերի և ԱՀՏԱ բաժնում սեպտեմբերի 22-ից մինչև հոկտեմբերի 20-ը ներառյալ, յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 10.00-ից 13.00-ն և 14.00-ից 16.00-ն: Ընդունելության համար անցկացվող հարցազրույցը տեղի կունենա ՀՀ ոստիկանության կրթահամալիրում նոյեմբերի 5-ին՝ ժամը 10.00-ին:

Տեղեկությունների համար զանգահարել 010-77-80-33 հեռախոսահամարով:

Հասցեն՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի պողոտա 29:

ԱՐՅԱՄԲ ՁԵՌՔ ԲԵՐԱԾ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ

Ադրբեջանի ԽՍՀ-ի կողմից տասնամյակներ ի վեր կիրառված հակահայկական քաղաքականությունը հայ բնակչության մարդկային և ազգային արժանապատվության ոտնահարումը, 1980-ական թվականներին ստեղծեց ծայրահեղ լարված իրավիճակ: Ադրբեջանցիները տարիներ շարունակ սկզբունքորեն ավերել կամ փակել էին բոլոր հայկական եկեղեցիները, որոնց մի մասը վերածել էին մզկիթների, հայկական բնակավայրերը պակասել էին, իսկ ադրբեջանականը՝ ավելացել:

ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ին վերամիավորելու արդար պահանջին Ադրբեջանի ԽՍՀ ղեկավարությունը (ԽՍՀՄ բարձրագույն իշխանությունների համաձայնությամբ) պատասխանեց բռնություններով: 1988թ. նոյեմբերի վերջին Կիրովբաղից (այժմ Գանձակ), Բաքվից, Շամխորից, Խանլարից, Դաշքեսանից և հայաշատ այլ վայրերից հայ բնակչությունը զանգվածաբար արտաքսվեց: Հայերի բռնագաղթը հաճախ ուղեկցվում էր ջարդերով և սպանություններով:

Հակահայկական մոլուցքով տարված Ադրբեջանի ԽՍՀ իշխանությունները 1990 թ. հունվարի 13-ին Բաքվում հրահրեցին հայ բնակչության նոր ջարդեր, եռանդուն կերպով սկսեցին ադրբեջանցիների նորանոր խմբեր վերաբնակեցնել ԼՂԻՄ տարածքում: Այս գործընթացն ուղեկցվում էր հայ բնակչության նոր կոտորածներով և բռնագաղթով: Ինքնապաշտպանության մղումով ստեղծվեցին հայ աշխարհագրայինների առաջին խմբերն ու ջոկատները, որոնք Շահումյանում, Գետաշենում և Լեռնային Ղարաբաղի այլ շրջաններում արժանի հակահարված տվեցին թշնամուն:

1991 թ. ապրիլի վերջից մինչև օգոստոսի 20-ը ադրբեջանական հատուկ նշանակության (ՄՆՆՁ) ջոկատները խորհրդային զորքերի հետ համատեղ իրականացրին «Օղակ» ռազմական գործողությունը: Թե՛ մարտեր ծավալվեցին Գետաշեն և Մարտունաշեն գյուղերի տարածքներում, արդյունքում նշված գյուղերն ամբողջությամբ հայաթափվեցին՝ վերաբնակեցվելով այլազգի մուսուլմաններով: 1991թ. հունիսին հիմնահատակ կործանվեցին Մարտակերտի և Հադրութի շրջանի 20-ից ավել հայկական

գյուղեր, սպանվեցին հարյուրավոր մարդիկ, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի քաղաքներից ու գյուղերից շուրջ 450 հազար հայեր դարձան փախստականներ: Պատանդ վերցվեց ավելի քան 700 մարդ, որոնցից շատերի ճակատագրերն այսօր հայտնի չեն: Հայաստանի և Արցախի քաղաքական վերնախավն ուղիներ էր փնտրում Մոսկվայի ու Բաքվի հետ լեզու գտնելու, որպեսզի Արցախի հայ ազգաբնակչության նկատմամբ թմրիկ գտումների և արտաքսման քաղաքականությանը վերջ դրվի:

1991 թվականի սեպտեմբերից 2-ից Արցախի անկախության հռչակումից ընդամենը մեկուկես ամիս առաջ, Լեռնային Ղարաբաղի մարզի այն ժամանակվա ղեկավարությունը և քաղաքական վերնախավը բոլորովին այլ խնդիրներով էր զբաղված: Պատմությունը «թեմեր» չի սիրում, բայց եթե չլինեք Մոսկվայի օգոստոսյան ծախողված խռովությունը, ապա Արցախում այսօր կարող էր լինել այլ ստատուս քվո և այլ քաղաքական իրավիճակ:

1991թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ ԼՂԻՄ մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը: Ընդունվեց հռչակագիր ԼՂԻՄ և Շահումյանի շրջանի սահմաններում Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն հռչակելու մասին՝ հիմք ընդունելով 1990թ. ապրիլի 3-ի Խորհրդային Միության Գերագույն խորհրդի «Խորհրդային Միության կազմից միութենական հանրապետությունների դուրս գալու կարգի» մասին օրենքը: Այդ օրենքի առանցքը Խորհրդային Միության կազմից դուրս գալու հանրաքվեի գաղափարն էր: Եթե միութենական հանրապետությունը ցանկանում է դուրս գալ Խորհրդային Միության կազմից, ինչը թույլատրում էր Սահմանադրության 72-րդ հոդվածը, ապա ընթացակարգը հանրաքվե է՝ ժողովրդական քվեարկությունը:

Արցախում ամիսներ անց՝ 1991-ի դեկտեմբերի 10-ին, տեղի ունեցավ անկախության հանրաքվե:

Այսպիսով, Արցախն իր անկախությունը հռչակեց «դե յուրե» գոյություն ունեցող Խորհրդային Միության օրենսդրության տառին ու ոգուն համապատասխան՝ չխախտելով որևէ օրենք և ընթացակարգ:

Արյամբ ձեռք բերած անկախության տոնի մեկնարկն Արցախում ամեն տարի տրվում է վաղ առավոտյան մայրաքաղաք Ստեփանակերտում, որտեղ Արցախի իշխանությունների ներկայացուցիչները, մտավորականներն ու քաղաքական գործիչներն այցելում են հուշահամալիր և ծաղկեպսակներ դնում զոհված ազատամարտիկների, զինվորների և ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին նախագահ Արթուր Մկրտչյանի շիրիմներին:

Սեպտեմբերի 2-ով հայոց պետականության պատմության մեջ նոր էջ բացվեց և կերտվեց հայկական երկրորդ հանրապետությունը: Արցախի անկախությունը պետք է դիտարկել որպես հայոց պետականության անբաժան մի մաս, որպես ընդհանուր պատմության մի կարևոր էջ:

Այս տարի, սակայն, աշխարհը ցնցած թագավարակն ստիպեց հնարավորինս համեստորեն նշել բոլոր նշանակալից օրերը և խուսափել մասսայական հավաքներից: Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության ղեկավար կազմն այցելեց Ստեփանակերտի հուշահամալիր և ծաղկեպսակներ խոնարհեց Արցախյան ազատամարտում զոհված ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշարձանին:

Անկախության հռչակմանը հետևած 29 տարիների ընթացքում աշխարհի որևէ պետություն չի ճանաչել Արցախի անկախությունը՝ չնայած պետականաշինության գործընթացում արձանագրված հաջողություններն ակնհայտ են, իսկ Ադրբեջանի ծախողված ռազմական արկածախնդրությունը ցույց է տվել, որ Արցախի անկախությունն անշրջելի իրողություն է, որ հայ ժողովուրդը հայրենիքի պաշտպանության հարցում ավելի միակամ և վճռական է, քան երբևէ:

Արցախի միջազգային ճանաչումը մեր արտաքին քաղաքականության առաջնահերթություններից մեկն է: Վստահ ենք, որ այդ հարցի ներգրավումը միջազգային գործընթացներին կապահովի հանրապետության քաղաքացիների իրավունքների և ազատությունների լիարժեք իրականացումը, ինչպես նաև թույլ կտա կայունություն ու անվտանգություն պահպանել տարածաշրջանում:

Շնորհավոր տոնդ, Արցախ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ 29 ՏԱՐԵՎԱՆ Է

Քեզ հետ ենք հյուսել փրկության արշալույսներ, Հայաստա՛ն աշխարհ

Քսանիճը տարի առաջ, երբ ծանր և անբարենպաստ պայմանների մեջ էր Հայաստանը՝ երկրաշարժից բազմա-հազար զոհեր, կորուստներ, երկրի մեծ մասն աղետի գոտի, ավերված գյուղեր ու քաղաքներ, քաղաքական ցնցումներ, սոցիալական հուզումներ և պարտադրված պատերազմ, այդ տառապալից տարիներին անգամ հայ ժողովուրդն անհողորդ էր իր որոշման մեջ. հայոց առաջնակարգ և կենսական նպատակն էր իրականացնել հայ ժողովրդի դարավոր երազանքը՝ կերտել ազատ, անկախ պետություն:

Հայ ժողովուրդը ցնծությամբ դիմավորեց հայոց պատմության նորաբաց արշալույսը, և 1991 թվականի սեպտեմբերի 21-ին, ի լուր աշխարհի, հայտարարեցինք մեր նոր պետության ծնունդը: Այո՛, սա մեր հայրենիքն է քաղաքա-



կան քարտեզի վրա՝ նոր անվանումով Հայաստանի Հանրապետություն:

Հայոց ընտանիքները խորապես գիտակցված էր, քանզի փորձառություն ունեինք. մենք հաղթում ենք, երբ միակամ ենք ու համախմբված: Պատրաս-

տական էինք՝ հանուն ազգային մեծագույն երազանքի իրականացման, և հուսադրված՝ պայքարում հաղթանակի բերկարանք սզալու ակնկալիքով: Ահա այսպես սկսվեց հայոց հաղթապատկան վերստին տիրա- **▶ 3**

ՀԻՇԱՐԺԱՆ ՊԱՅ՝ ՈՂՋ ԿՅԱՆՔԻ ՀԱՍԱՐ



Օգոստոսի 14-ը շատ սպասված օր էր ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի շրջանավարտների համար: Երեսուներորս սովորող ստացան այդքան սպասված դիպլոմները, նրանցից երկուսն էլ արժանացան գերազանցության դիպլոմի:

2019-2020 ուստարվա շրջանավարտների դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությանը ներկա էր Կրթահամալիրի ղեկավարությունը՝ Կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ.Բաբայանի գլխավորությամբ:

Կրթահամալիրի պետը շնորհավորեց ոստիկանության շարքերը համալրած ծառայողներին՝ մաղթելով նրանց բարի ու արժանապատիվ ծառայություն:

«Դուք այն շրջանավարտներից եք, որ երկրում ստեղծված համաճարակային այս բարդ շրջանում ապացուցել եք, որ ունակ եք նվիրունով և անմնացորդ ծառայել հայրենիքին:

Կրթահամալիրի ողջ անձնակազմը շնորհավորում է նորընծա սպաներին՝ մաղթելով մասնագիտական մեծ հաջողություններ:

ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՅԱՆ ՖԱԿՈՒՆՏԵՏԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐՆ ՍՏԱՅԱՆ ՍՊԱՍԿԱԾ ԴԻՊԼՈՄՆԵՐԸ

2020 թվականի սեպտեմբերի 22-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրում կայացավ ակադեմիայի հենակա ուսուցման ֆակուլտետի բակալավրիատի «Իրավագիտություն» մասնագիտությամբ 2019-2020 ուսումնական տարվա 29 շրջանավարտների դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությունը: Դիպլոմները հանձնեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ.Բաբայանը: Հանդիսավոր արարողությանը ներկա էին նաև ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ոստիկանու-

թյան փոխգնդապետ Մ.Մարկոսյանը, Կրթահամալիրի պետի տեղակալներ ոստիկանության գնդապետ Մ.Սուրադյանը, ոստիկանության գնդապետ Ա.Գալոյանը, ոստիկանության փոխգնդապետ Գ.Առաքելյանը, ուսումնամեթոդական և զարգացման վարչության պետ, ոստիկանության գնդապետ Գ.Գևորգյանը, ակադեմիայի պետ, ոստիկանության գնդապետ Գ.Գրիգորյանը:

Միջոցառման ավարտին Մ. Բաբայանը շնորհավորեց և հետագա ծառայության մեջ հաջողություններ մաղթեց շրջանավարտներին:

ԱՎԱՐՏԿԵՑ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ 2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ 1-ԻՆ ՀՈՍՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Սեպտեմբերի 16-ից 18-ը, ուսումնական տարվա վերսկսմանը զուգահեռ, ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնում անցկացվեց 2020-2021 ուսումնական տարվա 1-ին հոսքի եռամսյա նախնական մասնագիտական կրթական ծրագրով «Ոստիկանական գործ» մասնագիտությամբ «ոստիկան» որակավորմամբ ուսուցման դասընթացների ընդունելությունը: Ընդհանուր 40 դիմորդից մասնագիտական պիտանելիության հա-

մապատասխանության համալիր ստուգումից (թեստավորում համակարգչի միջոցով) դրական միավոր ստացավ 34 դիմորդ, որոնցից միայն 25-ին հաջողվեց հաղթահարել ֆիզիկական պատրաստականության նորմատիվների ստուգման դրական շեմը:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ողջ անձնակազմը շնորհավորում է նորակոչիկ ոստիկաններին՝ մաղթելով հաջող ուսումնառություն:

ՄԵԿՆԱՐԿԵՑԻՆ ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԻՍՈՐԴՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԸ

ՀՀ ոստիկանության նոր կազմավորվող պարեկային ծառայությունում պաշտոնի նշանակվելու նպատակով ՀՀ ոստիկանության կրթահամալիրում 5-ամսյա դասընթացին մասնակցելու համար 2020թ. սեպտեմբերի 7-ի առավոտյան ներկայացել էր սպասելիքներով, պատասխանատվությամբ, անհանգստությամբ ու պատրաստականությամբ լի դիմորդների առաջին խումբը (շուրջ 200 քաղաքացի և ոստիկանության ծառայող) ստուգումներից առաջինը՝ մասնագիտական պիտանելիության համապատասխանության համալիր ստուգումը (թեստավորումը) հանձնելու համար:

Թեստավորմամբ ստուգվում է դիմորդների ընդհանուր զարգացվածությունը, ծառայության համար անհրաժեշտ հմտություններն ու կարողությունները:



Գործընթացին ծանոթանալու նպատակով Կրթահամալիր էին այցելել ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Ա. Ֆիդանյանը, ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչները, որոնք ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ. Բաբայանի ուղեկցությամբ ծա-

նոթացան աշխատանքների ընթացքին:

Պարեկային ծառայության նոր մեծ ընտանիքին են ցանկանում միանալ ինչպես ՀՀ ոստիկանության ներկայիս ծառայողներ, այնպես էլ տարբեր կրթություն ու մասնագիտություն ունեցող ՀՀ քաղաքացիներ:

Առաջիկայում դիմորդների մյուս խմբերն էլ կմասնակցեն մասնագիտական պիտանելիության համալիր ստուգմանը, որից հետո դրական արդյունքներ գրանցած դիմորդներին սպասվում է ֆիզիկական պատրաստականության ստուգումը և հարցազրույցը: Պարեկային ոստիկան դառնալ ցանկացող առաջամարտիկներին մաղթում ենք հաջողություն և անկողորմ կամք:



2 ◀ Նախ և մեր մաքառումների ճամփան, այսպիսի չարչարանքներով մեկնարկեցինք մեր անցնելիք օրերը:

Եվ դարձյալ հառնեց Հայաստանը: Սա հազարամյակների լրջագույն պատմություն ունեցող, բայց քսանինը տարեկան Հայաստանն է՝ երիտասարդ ակյունով, եռանդով, քսանինը տարեկանի լավատեսությամբ ու համարձակ ծրագրերով, բայց ոչ երիտասարդի միանություն: Սա նոր Հայաստանն է, որին այլևս անհնար է խաբել կամ ահաբեկել, անհնար է պարտադրել կամ շահագործել: Սա նոր Հայաստանն է, որի հետ հնարավոր է բարեկամանալ և համագործակցել, հնարավոր է նրա հետ հաջողություններ տոնել և ցավ կիսել, հնարավոր է նրան օրինակ ծառայել և նրանից օրինակ վերցնել: Սա նոր Հայաստանն է, որ հիշում է շատ բան, բայց հիշաչար չէ, տեսել է շատ բան, բայց հայացքն ուղղել է ապագային:

Մեր ազգային հիշողությունը հայոց կյանքի դժնի տարիներին ահեղ փոթորիկներից անգամ երբեք չմարեց, այլ թեժանում էր՝ ոգեկոչելով հայոց մեծերին: Հայոց կյանքի արդար ճանապարհի օրհասական պահերին իմացյալ մահով դեպի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ 29 ՏԱՐԵԿԱՆ Է

անմահություն էին ընթանում քաջ վարդանները, մեծ սխրանքներ էին գործում նորաթուխ հայորդիները՝ իրենց կյանքը դնելով հայրենիքի գոհասեղանին:

Եվ դարեր շարունակ անհատնում թևածել է Հայկ Նահապետի, Տիգրան Մեծի, Վարդան Ջորավարի և բազում քաջագունների ազգաշունչ ոգին, որը քսանինը տարի առաջ վերածեց անպարտելի ուժի: Եվ քանի որ հաստատակամ էինք ու միաբան, կու՛ր միասնությամբ կերտեցինք մեր բարձրալի ազատ, անկախ Հայաստանը: Մենք հպարտ ենք և ուրախ, որ իրականացավ հայոց դարավոր երազանքը, հայն իրավունք ունի ապրելու և արարելու իր իսկ սրբազան հողում՝ անկախ Հայաստանի Հանրապետությունում:

Նորանկախ Հայաստանի Հանրապետությունը ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետություն է, որի անգնահատելի դերն անչափ կարևորում ենք. այն մեր անրակուռ վահանն է՝ ընդդեմ մեր ժողովրդի և պետության նկատմամբ ոտնձգությունների: Հիրավի, մեր կարոտագին սրտի սերն ու հույսն է հայ-

րենիքը. այո՛ և հավերժ այո՛, էլի մեր «Հայաստան յարն ենք սիրում...», սակայն, փառք Աստծո, ոչ թե «որք ու արնավառ», այլ արդեն իսկ հառնող ու ծաղկող հայրենիքը՝ Հայաստանի Հանրապետությունը:

Հայոց պետության կայացման ու զորացման գործում իր ծանրակշիռ դերն ունի ոստիկանությունը: Որպեսզի յուրաքանչյուր հայ հանգիստ և անվտանգ ապրի իր կերտած անկախ Հայաստանում, հայ ոստիկանն ամենայն բարեխղճությամբ է կատարում իր ծառայողական պարտականությունները՝ իրագործելով հասարակական կարգի պահպանությունն ու հասարակության անվտանգության ապահովումը:

Մեր ողջամիտ ժողովրդի հաղթանակների երթը հարատևելու է, քանզի քաջ գիտակցում ենք, որ անպարտելի ու գորեղ ենք, երբ միասին ենք:

Այսօր՝ անկախացումից 29 տարի անց, առավել քան պետք է մեր հայրենյաց սիրով և որդիական պատասխանատվությամբ ազգովի գորավիզ լինենք մեր երկրի հիմնախնդիրների լուծմանը, որ հարատևի հայոց բնօրրանը: Մենք դեռ շատ

բան պիտի ապացուցենք և, մնալով հաղթողի մեր դիրքում, ամառիկ պահելով նվիրական խաղաղությունը՝ բոլորին ներշնչենք նույն հանգստությունով, որ դրության տերը մա է, ով վերջին տասնամյակների և, ընդհանրապես, բոլոր ժամանակների ամենափայլուն ռազմական հաղթանակներից մեկի հեղինակն է: Եվ յուրաքանչյուրս հպարտորեն պիտի գիտակցենք, որ մենք ազգովի հավաքական մեծ ուժ ենք:

Հավերժություն մաղթենք դարերից եկած և դարեր գնացող մեր հայրենապաշտ ժողովրդին, որի համար շնորհված ժառանգություններից նախապատվելին եղել է հայրենյաց սերը. միաբանվենք այդ սիրո շուրջ, որպեսզի առավել ծաղկի ու շենանա հայոց մեծագույն պատվար Հայաստանի Հանրապետությունը:

Հավետ մնանք այսպիսին, ինչպիսին մենք ենք ու մեր սարերը՝ հայ՛ ու հայկական, սե՛գ ու պատվական:

Տոնը շնորհավոր, ի՛ն հայրենիք: Աճնա Սարուխանյան, ոստիկանության կապիտան

ՀԱՏՎԱԾ՝ «ԵՍ ՓՈՂ ԵՄ» ՊԱՏՄՎԱԾՔԻՑ

Ես փող եմ՝ հասարակ մի բան, որի հետևից մարդիկ, ամբողջ կյանքում վազելով, կորցնում են ճակատագրի կողմից իրենց երկրային կյանքի համար տրված ժամանակը, իսկ վերջում իրենց կյանքը գոնե մի քանի տարով, ամսով կամ օրով երկարացնելու համար ծախսում այն բոլոր փողերը, որ կուտակել են:

Ես փող եմ՝ պարզ մի բան, որի առատությունն ի գորու է սերը կայցնել աթարին, իսկ պակասը կամ բացակայությունը՝ վառելիք աթարը դարձնել շոկոլադից թանկ ապրանք:

Ես փող եմ, որը կարող է ուսումը դարձնել ամենաթանկ ուժը, իսկ ուսյալին՝ ամենաէժան աշխատուժը:

Ես փող եմ, որ ռեզիլենտ խաբկանքի ուժով կարող է վերելքը որպես անկուն մատուցել, վայրէջքն էլ՝ իբրև խելացնոր ձեռքբերում:

Ես փող եմ՝ շատ հասարակ մի բան, որ սեփական «ես»-ից հեռանալը կարող է որպես փրկություն մատուցել, իսկ վերադարձը՝ փախուստ նույն փրկությունից:

Ես ուղղակի փող եմ:

Մուշեղ Բաբայան
Ոստիկանության գեներալ-մայոր

ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ ՆՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

Այսուհետ ՅՅ ոստիկանության կրթահամալիրի սովորողները հնարավորություն կունենան էլ ավելի զարգացնելու մասնագիտական լեզվական հմտությունները:

Լույս է տեսել «Հայերեն-անգլերեն, հայերեն-ռուսերեն զրուցարանը» ՅՅ և ԱՅ ոստիկանությունների անձնագրերի և վիզաների վարչությունների ծառայողների համար, որի համահեղինակներն են ՅՅ ոստիկանության կրթահամալիրի լեզուների ամբիոնի պետ, ոստիկանության գնդապետ Ա. Հայրապետյանը և նույն ամբիոնի դասախոս, ոստիկանության մայոր Ա. Եղոյանը:

Զրուցարանը նախատեսված է անցակետային և օդանավակայանների ոստիկանության բաժիններում ծառայություն իրականացնող աշխատակիցների համար, կարող է նաև ուսումնական ձեռնարկ հանդիսանալ վերջիններիս և ՅՅ ոստիկանության կրթահամալիրի սովորողների համար: Այն օգտակար կլինի նաև օդանավակայաններում և սահմանային անցակետերում մաքսային ծառայություն իրականացնող աշխատակիցներին, ինչպես նաև ուղևորության մեկնող ցանկացած քաղաքացու:

ՅՅ ոստիկանության կրթահամալիրի սովորողների լեզվական հմտությունների կատարելագործմանն ուղղված քայլերն այսքանով չեն սահմանափակվում: Լույս է տեսել նաև Կրթահամալիրի քոլեջի լեզուների ամբիոնի ավագ դասախոս, ոստիկանության փոխգնդապետ Գալինա Ռուսակովայի «Русский язык» (Ռուսաց լեզու) ուսումնագործնական ձեռնարկի երկրորդ մասը: Ձեռնարկի առաջին մասը տպագրվել է 2019 թվականին: Երկրորդ մասը ևս լի է մասնագիտական բառապաշարով, քերականական նորարար վարժություններով, սովորողների մասնագիտական և բազմակողմանի զարգացմանը նպաստող տեքստերով:



«ՕՉՆԵՎՈՒՇԿԱՆ» ՀԱՂԹԵԼ Է ՀԱՄԱՌՈՒՄԱՍՏԱՆՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՐԱԿԱՆ ՄՐՅՈՒՅԹԻՆ



«Վարսերը հուր կրակի պես փայլվում ու չենթարկվող էին: Դե՛, Օլգայի բնավորությունն էլ էր կրակոտ... Մինևույն ջերմեռանդությամբ նա դուրս էր բերում վիրավորներին մարտի դաշտից, իսկ երեկոներն անցկացնում էր հոգնատանջ եղած մարտիկների համար Պուշկինի «Եվգենի Օնեգին» ասմունքելով»,- ՅՅ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի լեզուների ամբիոնի ավագ դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու, ոստիկանության փոխգնդապետ Գալինա Ռուսակովայի հեղինակած «Օգնուշկա» պատմվածքը նվիրված է հեղինակի հերոս տատիկի՝ ՌԴ վաստակավոր ուսուցչուհի Օլգա Ֆիլատովայի հիշատակին, որը

թյան փոխգնդապետ Գալինա Ռուսակովայի հեղինակած «Օգնուշկա» պատմվածքից մի հատված է:

Պատմվածքը հաղթել է «Մեծ հաղթանակի Հերոսներ-2020» համառուսաստանյան ամենամյա գրական մրցույթում: Այն գրական լավագույն պատմվածքի, ակնարկի, պատմական կամ ռազմախարենասիրական բովանդակությամբ բանաստեղծության մրցույթ է, որն անցկացվում է Ռուսաստանի գրողների միության կողմից՝ ՌԴ պաշտպանության նախարարության, ՌԴ կրթության նախարարության, ՌԴ մշակույթի նախարարության, Ռուսաստանի պետական գրադարանի, «Գաղտնի չէ» հրատարակչական տան հետ համատեղ:

Մրցույթին ներկայացված էր շուրջ 16 հազար աշխատանք, որոնց ընտրությունը կատարվել է երեք փուլով:

Գ. Ռուսակովայի հեղինակած «Օգնուշկա» պատմվածքը նվիրված է հեղինակի հերոս տատիկի՝ ՌԴ վաստակավոր ուսուցչուհի Օլգա Ֆիլատովայի հիշատակին, որը



Հայրենական մեծ պատերազմի ժամանակ կռվել է Ստալինգրադի մատույցներում:

Հեղինակի բնորոշմամբ՝ Օլգա Պետրովան, նույն ինքը՝ Օգնուշկան, ոչ միայն վաստակավոր ու մեծատառով ուսուցչուհի էր, այլև՝ երկրորդ համաշխարհային պատերազմի «լուռ հերոսներից»:

Շնորհավորում ենք հեղինակին՝ մաղթելով ստեղծագործական նորանոր վերելքներ:

Անի Ղուկասյան
ոստիկանության կապիտան

ՊԱՏՎԱԲԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

Դարեր տեսած մեր պայքարի, մեր ամուր կամքի, ընտրյալ ազգ լինելու շնորհիվ այսօր մենք ունենք ազատ, անկախ պետություն:

Անկախ և ինքնիշխան ապրելը ցանկացած ժողովրդի անկապտելի իրավունքն է: Մեր պարագայում ոչ միայն իրավունք, այլև պարտք է պատասխանատվություն:

Մեր երկրի խաղաղությունն ու համերաշխությունը պահպանվում է երկու հզոր կառույցների՝ բանակի և ոստիկանության շնորհիվ: Դրանք մեր հայրենիքի ամուր հեռախոսներն են: Զինվորը մարտնչում է սահմանների խաղաղության համար, իսկ ոստիկանը՝ ներքին խաղաղության: Երկու մասնագիտությունները պատվաբեր և պատասխանատու են այնքանով, որքանով և դժվար, սակայն հիշենք մեր վեհ հայրենիքի նվիրյալ Գարեգին Նժդեհի խոսքերը. «Հայրենիքին ծառայելը պատիվ է և ո՛չ պարտականություն»: Այսպիսով, յուրաքանչյուր անհատ, ով ընտրում է այս երկու կարևոր ուղիներից մեկը, նա պետք է գիտակցի, որ այն կատարելու համար սոսկ հայրենասեր լինելը քիչ է, պետք է նաև պատաս-



խանատու լինել հայրենիքի, ժողովրդի և ինքը քո առաջ:

Ներքին կայունությունն ու համերաշխությունն ապահով կլինի միայն պատասխանատու, նվիրյալ, ազգասեր ոստիկանի շնորհիվ: Հանդգված եմ, որ օրինականության, հասարակական և սահմանադրական կարգի պահպանման, հանցագործությունների բացահայտման և հանցավորության դեմ պայքարի գործում մեր առջև դրված խնդիրները լուծվում են պարտքի խոր գիտակցմամբ՝ հանուն պետականության ամրապնդման, հայ ժողովրդի

բարօրության և ամենակարևորը՝ օրենքի առջև հավասարության սկզբունքով, քանզի մեր երդումը ծառայությունն է պետությանը և ժողովրդին:

Եթե քո մեջ, ընթերցող, չես տեսնում այս հատկանիշներից որևէ մեկը, ապա պետք չէ միանալ և մտեմացնել այդ կառույցի անունը:

Կարդա՛, ուսումնասիրի՛ր, վերլուծի՛ր և հասկացի՛ր, թե որքան լուրջ և պատվաբեր առաքելություն է դա:

Անգելինա Սարգսյան
քոլեջ, 2-րդ կուրս

ԱՄԵՂՃԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՄԵՐ ՇՐՋԱՆԱՎԱՐՆԵՐԸ

ՁՈՆ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ

Գագաթները պարզ կանգնել են վսեմ, Գոռուն են, գոշուն լեռները հայոց, Հայացքներն ուղիղ թիկնել են իմ դեմ, Պարուն են, երգուն քաջերը հայոց:

Լեռներից տրված անվերջ գորությանը Ծաղկուն է սերունդ՝ պապերի ոգով, Մայր հողից սնված անձայն քնքրությամբ Նազուն է սերունդ՝ մայրական սիրով:

Իմ չեղնեցող ու հպարտ հոգին Նմանակուն է իմ հայրենիքին,

Ի ծնե տրված իմ ուժեղ սրտին Երբեք չի դիպչի օտարի քամին ...

Ես շա՛տ ուժեղ եմ մեր լեռների պես, Որոնք դիմացան դարերի ցավին, Ես նաև նուրբ եմ մեր դաշտերի պես, Որտեղ աճում են ծաղիկներ՝ մրբին:

Մեր հայրենիքում ծնվում են հզոր Եվ հայ ազգին բնորոշ որդիք, Մեր հայրենիքում չեն լինի անզոր Եվ թշնամիներից վախեցող մարդիկ ...

Արևիկ Սկրտչյան
ոստիկանության լեյտենանտ

